ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 02.10.2017թ. հ.Ե-1/92 գրության, տեղեկացնում ենք.

Բաղրամյան պողոտայի հ.1 շենքի բնակիչների կողմից Երևանի քաղաքապետին հասցեագրված 20.03.2017թ. հ.Կ-665 դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից կատարված տեղատեսությամբ հայտնաբերվել է Բաղրամյան պողոտայի հ.1 շենքի բակում, առանց հողօգտագործման իրավունքի և համապատասխան թույլտվության, գոյություն ունեցող շինության վերակառուցման շինարարական աշխատանքներ, որի առնչությամբ 23.03.2017թ. կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ հ.025240 արձանագրությունը, որի հիման վրա Երևանի քաղաքապետարանի 05.04.2017թ. հ. Վ-12/3 որոշմամբ՝ տուգանվել է 400000 ՀՀ դրամի չափով:

Հիշյալ կառույցը Երևանի քաղաքապետի 27.06.2017թ. հ.2159-Ա որոշմամբ ճանաչվել է օրինական, իսկ ինչ վերաբերում է այդ կառույցի մուտքի դիմաց՝ առանց համապատասխան թույլտվության, նախաձեռնված բետոնե հարթակի իրականացմանը, ապա քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից 05.10.2017թ. ձեռնարկված համապատասխան միջոցառումների արդյունքում այն քանդվել է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ